ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 հուլիսի 2016 թվականի N 96-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՕԽՏԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ/ ենթակետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2016թվականի հուլիսի 25-ի <<Վ.Ստեփանյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N62–Ա որոշումը, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.2016թ. հուլիսի 27-ից լուծել <<Օխտարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռաֆիկ Պողոսյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը և օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հարությունյան Հայկ - աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)

Ասրյան Աշոտ - աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Աթայան Նարինե - աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ

Պողոսյան Ռաֆիկ - <<Օխտարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ ժամանակավոր պաշտոնակատար (հանձնող)

Ստեփանյան Վարդան <<Օխտարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող):

3.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ. հուլիսի 28
ք. Կապան